

որպէս յընդհանուր տեսաք եւ տեսանեմք ի՛նչ աչօք մերովք, իբր զի քարոզեսցեն զՔրիստոս Աստուած հաւատալ են խոստովանիլ, եւ սովաւ դտանել 55 զփրկութիւն հոգւոց եւ հասանիլ թողութեան մեղաց, ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի՝ որ ասէ «սրտիւ հաւատալ յարդարութիւն, եւ բերանով խոստովանիլ ի փրկութիւն»։ քանզի ոչ ուստեք է հաստատեալ աւանդութիւնս այս, եթէ ոչ ի 60 նոյն ամենատեսառէն Քրիստոսէ Աստուծոյ, որ է Ժամանակս ինչո՞րք տնօրէնութեանն եւ փառաւոր յարութեանն պատուիրեաց աշակերտաց իւրոց ասելով, «երթայք յաշխարհ ամենայն եւ քարոզեսցէք, որ հաւատայ եւ մկրտեսցի՝ կեցցէ, եւ որ 65 ոչն հաւատայ՝ դատապարտեսցի»։

Որ եւ այսու եղեալ պայմանաւ՝ կրկին նշանս կնքեալ տեսանեմք ի բարերար Փրկչէն մերմէ, հաւատ եւ մկրտութիւն, ընդ որս եւ կան պարու- նակեալ ամենայն աւանդութիւնք եկեղեցւոյ, 70 որովք յայտնի ծանուցանին բոլոր խորհրդածու- թիւնք քրիստոնէից։ Քանզի՝ զինչ է հաւատ, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն եւ յանդիմանութիւն որոց ոչն երեւին, ըստ Առաքե- լոյն։ ըստ որոյ կանոնի պարտիմք հաւատալ ի Քրի- 75 ինչ ամենազօր եւ ամենակարօղ բնութեանն Աս- տուածութեան, է- ի-մ-մ-բել զերիս անձինս կատարեալս եւ յատկացեալս, Հայր՝ Զնօղ, եւ Որդի՝ Ծնունդ Հայրական, որպէս բան ի մտաց, եւ սուրբ Հոգի՝ բղխումն ի Հօրէ, անքննելի եւ անի- 80 մանալի, որոյ ոչ մեծութիւն եւ ոչ նուաստու- թիւն, այլ զ-ի-մ-մ-բել եւ համապատիւ, համակամ՝ համիշխան՝ համակար՝ համագործ եւ համազօր, անհատ՝ անորոշ եւ անբաժանելի, վերացեալ՝ բարձրացեալ՝ ժամանակաց եւ յաւիտենից, ան- 85 վախճան եւ անսահման թագաւորութիւնն, օր- հնեալ յաւիտեանս ամէն։

Հաւատամք եւ ընդ նմին՝ զմին յերից ան-